21 FEB 2013

1-й ЭКЗ.
08 MAR 2009

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

ВЕСТНИК архивов Армении

1(22)

1969

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН

ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մ. Ս. Սողոմոնյան
Դոցենտ

Լեոն, հիշատակելով Արցախի գավառանունները, նշում է, որ դրանցից «շատերն, անշուշտ, այն ժողովուրդների անուններն էին, որոնք ապրում էին լեռնային նահանգի զանազան կողմերում»[2]։ Այս հարցում պատմաբանը հիմք է ընդունել Մովսես Կաղանկատվացու հետևյալ արտահայտությունները. «Ի Մխանց տոհմին», «Աշխարհ Պարծկանց» և այլն։ Իսկ մենք ունենք «Մոխանք» գավառանուն, «Պարծկանք» գավառ։ «Ապացույց,— գրել է Լեոն,— որ գավառի անունը ցեղի անուն էլ էր։ ...Այս ձևի մեջ արդեն շատ պարզ է, որ «Պարծկանք»՝ ցեղի անուն էր»[3]։

Բ. Ալուրաբյանը տեղանունների օգնությամբ ապացուցել է, որ «հայ

ժողովրդի կազմավորումից առաջ Արցախի տերիտորիայում ապրել են Հաթերը, այն ցեղը, որն իր անունն է տվել կազմավորված ամբողջին (Հաթայ)»[5]:

Ինչպես նշվեց, պատմական «Արցախը տարածվում էր Սյունիքից արևելք՝ Կուր և Արաքս գետերի միջև։ Տերիտորիայով համարյա համընկնում է Լեռնային Ղարաբաղին և Միլիի տափաստանին»[24]։

XVII դարի սկզբից մինչև XX դարի 20-ական թվականները Հայկական Ղարաբաղ էր կոչվում Հայկական բարձրավանդակի դրեթե ամբողջ հյուսիս-արևելյան ծայրը, որի սահմանները հյուսիս-արևելքում հասնում էին մինչև Քուռ գետի հովիտը, հարավ-արևելքում՝ Արաքսի հովիտը: Արևելյան կողմից լեռնակուլայի այս ընդարձակ աշխարհը իջնում է այն տափաստանի վրա, որը կոչվում էր Միլի կամ Ղարաբաղի դաշտավայր: Արևմուտքում Ղարաբաղի եզրագիծ էին ընդունված այն ջրաբաժան բարձրությունները, որոնք Սևանա լճի արևելյան կողմում ձգվում են հյուսիսից դեպի հարավ՝ միանալով Գարալագյազի լեռներին: Բարդուշատի լեռնաշղթան Ղարաբաղը բաժանում էր Նախիջևանի գավառից: «Այդպիսով,— գրել է Լեոն,— պատմական առումից, այս սահմաններում պարփակված Ղարաբաղը համապատասխանում է Ուտիքի մի մասին, ամբողջ Արցախին և Սյունիքի մեծագույն մասին»[46]:

Փանահ խանը Շուշվա բերդին վերջնականապես տիրացել է ոչ թե ռազմական ուժով, այլ՝ դիվանագիտությամբ։

Այս ամենից զատ, տրամաբանության հակառակ է Շուշվա բերդի հիմնադրումը Փանահ խանին վերագրելը նաև այն պատճառով, որ դավանան Մելիք Շահնազարը վայրենաբարո խանի հետ դաշնակցելուց առաջ էլ կառուցի պայքարի մեջ լինելով հանդերձ մյուս մելիքների հետ, չէր կարող օգտագործած չլիներ իր տերիտորիայի անմատչելի տեղամասը՝ լեռնային ամրությունը։

Շուշին շարունակ հայաշատ քաղաք է եղել, Ղարաբաղի հայության տնտեսական ու կուլտուրական խոշոր կենտրոնը։ Դեռ 1831 թվականին այն իր ազգաբնակչությամբ մի քանի հազարով գերազանցում էր Թիֆլիսին։ Իսկ 1862—1863 թվականների մարդահամարի համաձայն, եթե Բաքվում բնակվում էր 14.897 մարդ, ապա Շուշի քաղաքում բնակիչների թիվը հասել էր 19.659 հոգու[75]։

1873—1876 թվականների վիճակագրական ամփոփումներով Շուշիում կային 24.552 բնակիչներ, որից տղամարդիկ՝ 13.666 հոգի, կանայք՝ 10.886 հոգի[76]։

1882 թվականի հունվարին Շուշիում մոտ 3000 հայ ընտանիք կար[77]։

1890 թվականին Լեոն գրել է. «Շուշիում հայերը քաղաքի մեծ մասն են գրավում, թուրքերը՝ փոքր մասը»[78]։